



հոգութեամբ վերաբերվելով դէպի մատաղ սերունդի ֆիզիկական կանոնաւոր դարգացման կարեւոր գործը: Անկասկած, եթէ մեր վարժապետները մօտիկուց ծանօթանային այս կարեւոր հարցի մանրամասնութեան հետ, եթէ նրանք ուշադրութեամբ հետեւին այդ հարցի մշակութեանը, և խմանային թէ ինչ միջոցներ են առաջարկվում այժմեան միասնակար հետապնդներին ազատելու համար, այն ժամանակ իրանք ևս կարող կը լինէին ազատել ուսանող սերունդը դպրոցի հակառակադասական և բնականորէն ներգործութիւնից:

ՆՆՐԻՒՆ ԼՈՒՐԻՐ

Ինչպէս ընթերցողը կարողացած կը լինի «Մշակի» անցեալ 139-որդ համարում, թեմական առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը դիմեց մեզ նամակով, խնդրելով որ օգնենք նրան փողեր հաւաքելու յօգուտ Զէյթունցիներին: Եւ ահա հետեւեալ անձինքներէ մեր խմբագրութեանը հասցրած փողերը մենք անմիջապէս կը հասցնենք սըրբազանին: Ահա սրանք են նուիրատու անձինք և նրանց ուղարկած փողերը: Գէորգ քահանայ Գալստեանց (Թիֆլիսում) հաւաքեց և մեզ հասցրեց 40 ռուբլի, Գէորգ Կուզմանց (Թիֆլիսում) քահանայ խօշտէրութեանցի առնել տուած ճաշի ժամանակ հաւաքեց և մեզ հասցրեց 72 ռուբլի, Գորուց մի անյայտից ստացանք 1 ռուբլի և վերջապէս բոլորակապէս ցովհաննէս Գասպարեանց (Թիֆլիսում) հասցրեց մեզ այսօր 50 ռուբլի: Այդ ամբողջ գումարը, որ կազմում է 163 ռուբլի, ինչպէս և ապագայում նոյն նպատակով ստանալի փողերը, մենք անմիջապէս կը հասցնենք սըրբազան առաջնորդի կարգադրութեանը:

Երկուշաբթի օր, զեկտեմբերի 7-ին, կայացաւ Թիֆլիսի դուռայի հերթական նիստը, որը համաժողովայնապէս նուիրված էր ջրանցքի հարցին: Քաղաքային վարչութիւնը՝ դուռայի անցեալ նիստի վճռի համաձայն, ներկայացրեց մի զեկուցում, քաղաքի աղքատ ընտանիքներին ձրիաբար ջուր մատակարարելու մասին: Այդ զեկուցման մէջ մի շատ աչքի ընկնող կէտ կար. այդ այն է, որ քաղաքային վարչութիւնը՝ իր հաւաքած տեղեկութիւններէ հիման առաւ, արժողութիւն մէջ մի անգամ ինքնապէս զգուշացնելով, որոնք իրաւունք ունեն ձրիաբար ջուր ստանալու ջրանցքից: Դա, ի հարկէ, մի ուրախակի երևոյթ կը լինէր, դա, ի հարկէ, մի մեծ պատիւ կը բերէր Թիֆլիսին, որ իր հարկւր հաղորդ բնակիչներին մէջ այնքան թիչ աղքատներ ունի, դա, ի հարկէ, կարող էր ամաչեցնել ֆարսիկին, Լօնդօնին, եթէ... եթէ միայն ճիշդ լինէր: Այն, ուրախակի կը լինէր, եթէ ճիշդ լինէր: Բայց, տարաբարաբար, այդ մի շատ կասկածելի թիւ է, որի դէմ իրաւացի կերպով խօսեցին ձայնաւորներէ շատերը: Այդ առիթով վարչութեան անդամ պ. Խզմայով յայտնեց, որ իշանցները փակվում են ոչ թէ նոցա համար, որոնք իրանք են իրանց համար ջուր վերցնում: Կարելի, այլ թուումսկիներին և ջրկիրներին համար: Գուման ձայների առաւելութեամբ հաստատեց վարչութեան զեկուցումը: Մեծ վիճաբանութիւններ առաջ բերեց մի ուրիշ հարց, այն է ջրանցքի գործածութիւնը մի ուրիշ ընկերութեան յանձնելը, որի մասին ձայնաւոր Ղորդանեանց ներկայացրել էր մի առանձին զեկուցում: Զայնաւորներին մէջ եղան մի քանիսն, որոնք այն միտքն էին պատկաւում, թէ հարկաւոր է ջրանցքի գործածութիւնը յանձնել բելգիական ընկերութեանը, որը այդ մասին արդէն յայտնել է իր համաձայնութիւնը և պայմանները: Բայց երկար վիճաբանութիւններից յետոյ, դուռան ձայները մեծամասնութեամբ մերժեց ջրանցքը կապաւորով տալու առաջարկութիւնը, և յանձնեց քաղաքային վարչութեանը, մի ծրարի կազմել, թէ ինչ միջոցներով կարելի է լայնացնել ջրանցքի ցանցը, որպէս զի դրանով ջրանցքը արդիւնաւոր լինի քաղաքի համար: Այդ նպատակի համար քաղաքը փող չունի, և դուռայի մէջ այն միտքն էլ յայտնվեցաւ, որ էլի նոր փոխառութիւն պէտք է անել:

Գեկտեմբերի 8-ին կայացաւ Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը: Հերթական հարցերը վերջացնելուց յետոյ, ժողովը ի նկատի ունենալով որ եկող տարվայ յունիստիւն լրանում է պետական կալուածների միջնորդութեան գումարների յիմնադրումը, վճռեց այդ առիթով ըն-

կերութեան կողմից չնորհաւորական մի հեռագիր և մի ուղերձ ուղարկել յիշեալ միջնորդութեանը: Ուղերձը չբեղ պէտք է լինի. նրա վրա պէտք է նկարկեն թէ Գիւղատնտեսական ընկերութեան և թէ Այգեգործական դպրոցի շինութիւնները: Ժողովը որոշեց այդ նկարների պատրաստելը յանձնել նկարիչ Բաշինջադեանին: Նոյն նիստում ժողովը վճռեց ուղարկել միջնորդութեան պ. Ա. Կասախանի զեկուցումը «Համայնական միջնորդութեանը» մասին, կցելով դրան ժողովի արձանագրութիւնը՝ իբրև պատասխան միջնորդութեան հարցին, որով նա դիմել էր մի քանի տարի առաջ ընկերութեանը՝ ցանկանալով իմանալ վերջինի կարծիքը այդ խնդրի մասին: Ժողովը այդ նիստում զբաղվեցաւ Գումարայիտում այգեգործական դպրոց բանալու հարցով: Երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը՝ որոշ եզրակացութեան չը դադարձնելով, վճռեց այդ հարցի մանրամասն մշակութիւնը յանձնել մի առանձին յանձնաժողովի, որը և իսկոյն ընտրվեցաւ: Յանձնաժողովը պէտք է այդ մասին մի մանրամասն և հիմնաւոր զեկուցում ներկայացնի ընդհանուր ժողովին:

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ եկող 1888 թվի պետական նախահաշիւի և նշանակված կրեդիտի չափի մէջ ոչինչ փոփոխութիւն չի լինելու: Կէս հասարակաց շինութիւնները կառուցման աշխատանքների համար նշանակված ծախսերը մինչև անդամ նշանաւոր կերպով կարճացվելու են:

Թիֆլիսում տարածված են այժմ, մանաւանդ մանուկների մէջ մի քանի տարափոխիկ հիւանդութիւններ: Երեխաները հիւանդանում են, մանաւանդ բնակարանում և, ինչպէս երևում է, մահվան մի քանի դէպքեր էլ եղել են: Լաւ կը լինէր եթէ մեր բժիշկները հրատարակէին տեղական ընդունելու տարրական առողջապահական կանոններ, թէ ժողովուրդը ինչպէս պէտք է պահի իրան այդ տեսակ տարափոխիկ ախտերի ժամանակ: Մենք, մեր կողմից ուրախութեամբ կը տպէինք «Մշակի» էջերում այդ տեսակ զգուշացնող կանոններ, եթէ մեր քաղաքի հմուտ բժիշկներից մէկը աւելի շուտ ունենաւ հաշիւները, որոնք իրաւունք ունենաւ արդէն տեսակ փոքրիկ աշխատանքը յանձն առնել:

Մեզ գրում են ԳՕՐԻՍԻՅ հետեւեալը: «Ինչպէս յայտնի է ձեզ, տեղական երիտասարդներից կաղ մող նոր զօրքի մի մասի ընտելութեան տեղը ԳՕ-րի քաղաքն է: Այժմ այստեղ հաւաքվել են թէ հայ և թէ վրացի նորակող ղեկավարներ: Նոյն ժամանակ 21-ին տեղիս հայոց մայր-եկեղեցին լի էր բաղնիքներով, որոնց թուում է նոր եկած հայ ղեկավարները: Պատարագից յետոյ Ստեփաննոս առաջ քահանայ Տէր-Ստեփաննոս մի գեղեցիկ քաղաքի անց, և դիմելով ի միջի ալլոց հայ նորակող ղեկավարներին, աղբու խօսքերով յորդորեց նրանց միշտ աշխուշ, միշտ բազմ և միշտ հաւատարմութիւնը կառավարութեանը, որպէս զի իրանց վարմունքով կարողանան արգարացնել այն հաւատը, որ կառավարութիւնը միշտ ունեցել է հայերի մէջ և կարողանան, մի և նոյն ժամանակ յիշեցնել ու նորից կենդանացնել մեր նախնիների հերոսութիւնները ու քաջագործութիւնները»:

ԽՍՆԱՎԱՐԱՐ զեկուցում մեզ գրում են: «Մեր դիւղը գտնվելով Եւրոպական դատարանի խաղաղութիւնը զիւղերի մէջտեղ, միշտ ենթակայ է ամեն տեսակ վտանգների այդ վերջինների կողմից: Թուրքերը առաջակային խմբեր են կազմում և դիւղերով յարձակվում են մեր դիւղի վրա: Այս օրերս մեծ կռիւ է պատահել զիւղի ժամանակ թուրք առաջակների մի խմբի և մեր դիւղի զիւղերապահների մէջ, որոնք քաջութեամբ դիմադրում էին թուրքերի յարձակմանը: Թուրքերը վերջ ի վերջոյ ստիպվեցան փախչել. մերոնցից էլ բազմաթիւ պէս ոչ ոք վիրաւորված չէր: Սրանից առաջ համարեաւ արմատախիլ էին եղած այդ տեսակ չարագործութիւնները»:

Մեզ գրում են ԲԱԳՈՒՅ, որ այդ քաղաքում կաղանկարված հայոց զերտաւանական խումբը շարունակում է տալ հայոց ներկայացուցիչներ: Պիէսաների բնակչութեանը, ի հարկէ, նոյնն է ինչ որ տարիներով գոյութիւն ունէր և Թիֆլիսում:

Բայց մեր թղթակիցը գրում է խմբի խաղը:

«Сѣверный Кавказъ» լրագիրը հաղորդում է որ ներկայումս Վլադիկավկաս քաղաքում տրուում են թէ ծաղիկ և թէ սկալաթինա ամփած տարափոխիկ ցանքեր, որոնց դոհ են դնում ոչ թէ միայն մանուկները, այլ և հասակ առածները:

«Донская Пчела» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս լոյս կը տեսնի «Գօն-Աղօլիան ուսահայոց օրացոյցը առաջիկայ 1888 թվի համար»:

ԳՕՐԻՍԻՅ մեզ գրում են: «Այս օրերս այստեղ պատահել է մի անցք, որ վրդովեցրեց ամբողջ Զանգեզուրը: Մի տաւան և հինգ տարի առաջ դեռ տեղիկ է Գօրիսում իր ջահիլ կնոջ հետ մի շուրջեցի հայ Գ. անունով: Նա խոհարարութիւն էր անում այստեղ: Երկար ժամանակ ամուսինները անդաւակ էին մնացել, վերջապէս մի երեք տարուց յետոյ Գ-ի կինը մի աղջիկ է բերում: Նոր ծնած մանուկի կնքահայրը լինում է թ. աղբա-նոսում մի 23 տարեկան լերիտասարդ աստիճանաւոր: Քանի մի ժամանակ առաջ Գ. մեռնում է այրի կինը մնում է իր երեխայով, որ այժմ 12 տարեկան է: Ներկայ թվի հոկտեմբեր ամսին թ. որ ինքնապէս է տանում այրի կնոջ ու նրա աղջկայ մասին, գնում է տեղի հայ քահանաներից միին մօտ և յանկարծ յայտնում է, որ կամենում է պսակվել իր ասնիկի հետ, նոյն իսկ այն աղջկայ հետ, որի կնքահայրն է եղել նա 12 տարի առաջ: Քահանան մերժում է պսակը կատարելու. այն ժամանակ թ. դիմում է միւս քահանաներին, բայց բոլորն էլ մերժում են: Թ. այժմ 35 տարեկան է, իսկ աղջիկը 12 տարեկան: Բացի դրանից հայոց եկեղեցու օրէնքով չէ կարելի պսակվել այն աղջկայ հետ, որի կնքահայր նա եղել է: Երբ քահանաներից մերժում ստանալով, անմիջապէս ուղևորվում է երեխայի հետ Եւրօպի և այնտեղից պսակված են վերադառնում Գօրիս: Այժմ հայոց է ծաղում. արդեօք եթէ հայոց եկեղեցին ունի հաստատ, որոշ և անփոփոխ կանոններ, այդ կանոնները միանման չեն Գօրիսում և Եւրօպիայում: Կամ այդ եկեղեցական օրէնքները պարտադիր են միայն Գօրիսի քահանաներին, իսկ Եւրօպի հոգևորաւորները կարելի է մի 35 տարեկան մարդուն պսակվել մի 12 տարեկան երեխայ-աղջկայ հետ, բացի սրանից հայոց եկեղեցին թույլ է տալիս արդեօք որ տղամարդը պսակվի այն աղջկայ հետ, որի կնքահայր է եղել նա»:

Մեր յայտնի դերասան պ. Աղամեան շարունակում է մեծ աշխուշով ունենալ ՕԳԵՍՍՈՒՄ: Այդ քաղաքի ուսու լրագիրները ասում են, որ չը նայելով թէ Օրէսայի ուսու հասարակութիւնը հայերն չէ հակնաւոր, բայց Աղամեանի խաղը («Համէլետ», «Օտէլլո» և «Արքայ Լիր») այն աստիճան զեղարուեստական է, որ հայերն լեղու չը հասկացող հանդիսականը հասկանում է տաղանդաւոր դերասանի խաղի բոլոր նրբութիւնները:

Ստացանք Պետերբուրգից պ. Ա. Գուլամիրեանից «Արքայ» հրատարակութեան առաջին դիրքը, որի մէջ հաղորդած մի քանի տեղեկութիւններէ երևում է, որ ներկայ տարում պէտք է երկու դիրք միայն հրապարակվի և եթէ բաժանորդագրութիւնը լաւ գնաց, մտադրութիւն կայ առաջիկայ տարվանից մասնաբաշխ դարձնել. սակայն, տարաբարաբար, մինչև այժմ բաժանորդագրութիւնը այնքան թույլ է գնում, որ «Արքայ» հրատարակողը այդ մասին խօսելն անգամ աւելորդ է համարում: Բաժանորդագրութիւնը քաջված է երկու դիրքի համար և բաժանորդագրելն է երեք ռուբլի: Հրատարակութիւնը սպասեցողաբար է և առաջին դիրքի մէջ, ի միջի այլոց զետեղված են Պօլսի Յարութիւնի պատրիարքի, Խորէն Նար-Բէյի և Լօնդոնի պարսից զննարան Մեղրուսիանի պատկերները, որոնք շատ աշխուշ են: Առհասարակ «Արքայ» առաջին դիրքի արտաքին տեսքը մաքուր և գեղեցիկ է. իսկ ինչ վերաբերում է այդ նոր պարբերական հրատարակութեան բովանդակութեանը և ուղղութեանը, մենք կաշխատենք այդ մասին մի փոքր երկար խօսել «Մշակի» յաջորդ համարներին մէկում:

Տեղական լրագիրները հատաւորում են որ Թիֆլիսում վերջին ժամանակները երևացել է

ծաղիկ կոչված տարափոխիկ հիւանդութիւնը: Քաղաքում եղել են նոյնպէս և սկալաթինով հիւանդացողների դէպքեր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԻՌԵԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԵՒ ԳԵՐԳԱՆԱԿԱՆ ԲԵՅՅՈՍԱԳԸ

Ձը նայած որ այժմեան գերմանական բէյաւտաղը մեծ մասամբ այնպիսի անձինքներից է կազմված, որոնք բաւական եռանդուն հնազանդութիւն են ցոյց տալիս Բիսմարկի ընդհանուր քաղաքականութեան, բայց և այնպէս նոյն բէյաւտաղի ազատամիտ կուսակցութիւնը անդադար փորձեր է փորձում իրագործելու գերմանական պետութեան մէջ զանազան նոր և ազատ պրօգրամներ, լինի այդ տնտեսական, սոցիալական, թէ նոյն իսկ դատաստանական բովանդակութեամբ: Այդպիսի մի ազատամիտ պրօգրամի իրագործման մասին է այժմ աշխատում գերմանական բէյաւտաղի ազատամիտների կուսակցութիւնը: արծարծելով երդուեալներ ղառարանի իրաւունքների մեծացնելու հարցը: Այդ կուսակցութիւնը պատգամաւոր Մունկելի նախաձեռնութեամբ ներկայացրել է բէյաւտաղին մի առաջարկութիւն, որով պահանջում են երդուեալների դատարանին ենթարկել բացի քաղաքացիական և բրէական գործերը, նոյնպէս և քաղաքական և մամուլի վերաբերեալ գործերը:

Որպէս զի այդ խնդիրը պարզ լինի ընթերցողների համար, հարկաւոր ենք համարում նախ և առաջ մի փոքրիկ բացատրութիւն տալ: Երբ Գերմանիայում հաստատվեցան դատարանական բէյֆօրմներ, բէյֆօրմները արմատական և ջերմ համակրողները ամենայն ջանք գործ էին դնում, որ ամեն տեսակ գործ ենթարկվէր երդուեալների դատարանին. ազատամիտ կուսակցութիւնը այն ժամանակ պահանջում էր, որ երդուեալները դատարանի իրաւասութիւնը տարածվէր ամենանշանաւոր գործերի ընտելութեան ևս, ինչպէս են քաղաքական յանցանքները և այլ այդպիսի առանձին աշխատութիւն ունեցող գործերը: Բայց այդ ազատ ծրարը դիմադրութեան հանդիպեցաւ կառավարչական շրջաններում, և այժմ Գերմանիայում դատավարութիւնը երեք կարգի է բաժանվում: Քաղաքացիական-բրէական գործերը ենթարկվում են երդուեալների դատարանին. քաղաքական և մամուլի գործերը առանձին կազմակերպութիւն ունեցող դատարանում են ջննդվում, իսկ կան և մի այլ տեսակի դատարաններ, որոնք յատկապէս կազմակերպվում են առանձին, և արտաքին կարգի գործերի համար, չեֆֆեն-նե րի իւսու դատարան է կոչվում: Սրանից մօտ տասը տարի առաջ գերմանական կառավարութիւնը սպառնաց սահմանափակել դատարանական նոր բէյֆօրմների գործադրութիւնը, եթէ բէյաւտաղը կը պնդէր այն կտի վրա, որ քաղաքական ընտելութեանը Ազատամիտ կուսակցութեան այդ պահանջը ունի իր հիմքերը. առհասարակ քաղաքական յանցանքները դատվում են արտասովոր խտութեամբ, իսկ մամուլը միշտ ենթակայ է հալածանքների նոյն իսկ ամենահասարակ դէպքերում. բաւական է յիշել, թէ քաղաքական լրագիրներ քանի քանի անգամ դատի են ենթարկվում հէնց միմիայն իշխան Բիսմարկի պատճառով:

Այդ նոր պրօգրամի կողմնակիցները պահանջում են, որ դատարանը բարձր լինի կանգնած զանազան քաղաքական հոսանքներից և ամեն տեսակ գործեր ջննդվեն և դատվեն միմիայն արդարութեան համեմատ: Երդուեալների դատարանի վերաբերեալ այդ նշանաւոր պրօգրամը մեծ հետաքրքրութիւն և վիճաբանութիւններ կարուցեց բէյաւտաղի մէջ: Խօսեցին մի քանի կուսակցութիւնների ներկայացուցիչները: Պատգամաւոր Մունկել իր երկար ճառի մէջ ի միջի այլոց մատնանիշ արեց և այն հանգամանքի վրա, որ քաղաքական գործերը ենթարկվում են երդուեալների դատարանին ոչ թէ միայն եւրօպական շատ երկրներում, այլ նոյն իսկ Բալկանիայում, որ Գերմանիայի մի մասն է կազմում: Այդ մի և նոյն սկզբունքը ջերմ կերպով պաշտպանեց նոյնպէս և կենտրոնի զեկուցար Ալիքօօրստ, որը իր ճառի մէջ այն միտքը յայտնեց, թէ միմիայն երդ-

անհրաժեշտ դատարանը կարող է դիմադրել կամ մայրական ու թեմային: Պատկանողական կուսակցությունները հանդիմանում են այդ հարցի քննության փամանակ մեծ վիճաբանությունների մեջ չը մտան, բայց այն կարծիքը յայտնեցին, որ այժմ այդ հարցը քննել ոչինչ գործնական միտք չունի, որովհետև կառավարությունը բոլոր ոլորտներում կը դիմադրի այդ մտքի իրագործվելուն: Գուցէ և այդ հարցի կողմնակիցները յոյս չունեն, որ այժման իշխանության կը դիմադրի այդ առաջարկությունը, բայց և այնպէս նրանք չեն դադարում այդ մասին աշխատելուց, համոզված լինելով որ անխնայ աշխատանքով և արդար պրոպագանդայով կարելի է իրագործել ամեն տեսակ հարցեր և պրոպագանդան:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 28 նոյեմբեր

Վերջի փամանակներս Թիւրիսի մասին մէջ կարողացիք խել մը կծու դիտողություններ ի մասին «ազգայնէր» բառին անդեպ գործածությունն. ես ևս երբեմն առիթ ունեցած եմ մի քիչ հեղինակ այդ բառին շուրջ կիրառությունը, բայց այժմ կը մտածեմ թէ ամեն ոք անխնայ է, և իմ կողմանէ աւելի արմատական բարեփոխություն մը կողմնակից եմ, այսինքն «ազգայն» անմահ բարբարոս տիտղոսը նախապատիւ համարել «ազգայնէր» տիտղոսին, և անխնայ «ազգայն» անմահ բարբարոս անուանել զանոնք—կենթադրեք ոչ—զանոնք, որ ոչ թէ ազգին բարիք մը կընեն, այլ զանոնք, որ ազգին չարք չեն քննարկել: Արդարեւ մի քանի ատենէ ի վեր աշխարհում անհաշիվ ինչ որ կը դառնայ ծանկատանի հայոց մէջ, կը մտածեմ թէ հայ ազգը աշխարհիս ամենէն երջանիկ ազգն ըլլաւ թերեւ, եթէ հայերը միանգամայն ընդ միշտ դադարէին ազգին թէ բարիք ընել, թէ չարիք հասցնել: Եթէ հայտնակը մը ընենք կատարած բարեաց և չարեաց, տարակույս չը կայ թէ «բարեաց» դուրսը մեծ «հեղինակ»—ինչպէս դուք կընէք—պիտի ունենայ: Հետեւեալ, իմ կարծիքով, ազգին բարեբանները կողմնակից բարեի են նոյն, ոչ գէթ չարիք մը չեն հասցնել ազգին: Բայց կարծեմ թէ «իւրօպի» մ'է պահանջել, որ հայը չը քննարկէ ազգին:

Մի շարք թէ ազգային տիրությունը շատցած է, բայց այնպիսի տիրություն մը, որ ոչ թէ զայն ուրիշ կողմէ, այլ տեսակ մը վնասող լինի, տեսակ մը սրտնեղություն, և գուցէ յուսահատություն: Ամէն ոք կը սկսի իրարու ըսել.

—Ինչ մեղք ունի տաճիկը, ինչ մեղք ունին ուրիշ օտարներ, ոչ ապաքէն մենք մեր ձեռքերով միշտ կը քանդենք մեր տունը: Փննելը գէթ այս վերջի ամսոյ տիրապետիկ պատահարներն, ոչ ապաքէն ամեն ինչ հայոց նախաձեռնություններն է, ոչ ապաքէն ամեն ինչ հայոց—և նոյն իսկ զարգացող հայոց—դրոյման ու մատուցած մեծն է որ կը պատահի:

Եւ վերստին գերեզմանատուն մը, որ ծնունդ կուտայ այս ազգային սրտաբեկությունն: Պէշիկթաշի գերեզմանատան խոյրը վերստին կը յուզուի, բայց շատ աւելի ծանր կերպարանքով մը, այնպէս որ ոչ մի հայ կարելի է գտնել այսօր, որ կարենայ ըսել թէ անխնայ եմ տաճիկներէ եթէ Պէշիկթաշի գերեզմանատունն և ուրիշ գերեզմանատուներն ալ բռնություններ և հրացանով խելն մեր ձեռքերէն: Ո՛չ ապաքէն արդէն սրբազան մը տուած է իրենց արձակումը:

Անցեալ ուրբաթ էր թէ շաբաթ, չեմ յիշեր լաւ արժանի պալատէն զինուորական մը կուգայ պատրիարքարան և կը քննարկէ թէ ինչ է միջոցաւ փաշան կը յայտարարէ: Այդ պէտք է որ շուտ, առանց սպասելու կաթիլ թէ կան իրադէսի պարսկ Պէշիկթաշի գերեզմանատունը:

Անշուշտ զարմացիկ միտք մը:—Կայսրն որ չուզեց սեփականել այդ գերեզմանատունը, որ պէս զի չը վիրատու հայոց կրօնական զգացումն են, ինչպէս հայ է, որ այսպէս շուտ կարծիք փոխէ:—Բայց զարմանալի պահեցեք. կայսրը թերեւ տեղեկություն ալ չունենայ, և եթէ ունենայ իսկ, կատարեալապէս արդար է: Պատմութեւ համառոտ մը:

Վերջին շաբաթներս «Առեւ» հրատարակեց իզմիրէն մի թղթակցություն, յորում կըսուէր թէ իզմիրի հայոց գերեզմանատուն մի մասը կը պար-

պուր, ոսկորներն այլուր կը փոխադրուին, որպէս զի պարսկ հողին վրայ խառնություն չինուին և եկեղեցուց ու դպրոցի եկամուտ լինի տարեկան մօտ 1,500 ռուբլի: Իզմիրի առաջնորդ Մեքիսեղէն կաթողիկոսին առաջարկությունն ու հաճութեամբ կը կատարուի այս ձեռնարկությունը: Այս տեղեկություններն ստանալով «Առեւը», կրօնական ժողովը անմիջապէս կը գրէ իզմիրի, որ զարգացող գերեզմանաց պիտուի. իսկ իզմիրի կառավարիչ փաշան եղևուծիկն կը հաղորդէ հեռագրաւ ի Պոլիս, ուր ինչ արձանի պալատն Բայց աւելորդ նեղություններ չեն կառնու, վասն զի իրմէն առաջ ազգայն հայեր այդ պարտականությունը կատարած են: Ո՛չ միայն լրարգրական թղթակցություններն, այլ և իզմիրի ժողովոց ատենագրությունները թարգմանելով, տարած են արձանի պալատն և ներկայացուցած են Օսման փաշայի: Հարկ է ըսել, որ այդ հայերը անոնցմէ են, ոչ ոք ի թուին աշխատեցան Պէշիկթաշի գերեզմանատունը յանձնել տալ, բայց երբ կայսեր ազնուութենէն պարտուեցան, այժմ կուզեն յաղթական դրօշ պարզել: Լսելով այդ տեղեկություններն, Օսման փաշա անմիջապէս սա հետեւութիւն կը հանէ թէ քանի որ հայոց արքայապետ մը, զոր հայերն արժանի համարեցան իրենց եկեղեցուց ամենաբարձր պաշտօնի կոչելու, եկեղեցուց օրինաց համաձայն կը գտնէ գերեզմանաց ոսկորներու փոխադրությունը, և խղճաճարկութիւն չունի խառնություն չինել այդ գերեզմանաց վրայ, ըսել է որ հայոց կրօնը արդեւ մը չունի, հետեւեալ խղճման և հայ եկեղեցականը, որ այս տարի փետրուար ամսոյ մէջ ըրին այսբան հոգը ընդդիմություն Օսման փաշայի հրամանագրին, չունէին ուրիշ այլ նպատակ, բայց ինքն ուղղորդ Սուլթանի անձին զէմ թշնամական ցոյց մը ընել:—Կարելի է մեղադրել Օսման փաշայի այս արամբանությունը: Ո՛չ, ով որ ալ լինէր, նոյնը պիտի մտածէր:

Այս տրամաբանությունն հիման վրայ կը գրէ Օսման փաշա իւր դիրքն առ Պատրիարքն: Այդ թէ և դէ Երէն մէջ խօսելով Մեքիսեղէն կաթողիկոսի մասին, կը յայտարարէ թէ՛ հայոց եկեղեցուց այսպիսի դիտումն և աստուածաբան կաթողիկոս մ'է որ գերեզմանաց փոխադրություն կը թղթատուէ:—Չորս դպրոցներուն խառնութիւն չինելու համար գերեզմաններու մէջէն ոսկորներ հանելը մեղք չէր սեպել և Սուլթանի պէտքին համար հանելը մեղք կը համարէր: Գրեթէ իւր բառերն են: Իսկ Մեքիսեղէն կաթողիկոսին Օսման փաշա այնպիսի անպատեհ կուտայ, որ միայն Պատրիարքին յատուկ են:

Երբ այս թէ և դէ Երէն կը համար ի Պատրիարքարան, իրարանցումը մեծ կըլլայ. պատրիարքական փոխանորդը կը հրաւիրէ կրօնական ժողովը նիստ ընել և որոշում տալ. կրօնական ժողովը խմբովին կը թղթայ Պատրիարքին մօտը և կը խորհրդակցին. յետ այդ խորհրդակցութեան Պատրիարքը կորոշէ հետեւ պատասխանը խրկել թէ՛ ինքն հրաժարած է. Գաղաթական ժողովը չէ վաւարացուած, հետեւեալ արդարին իշխանութիւնը գոյություն չունի. այսպիսի պարագայի մը մէջ ազգին կողմանէ ո և է որոշում չը կրնար արուլը: Այս առիթէն Պատրիարքը օգուտ կը քաղէ, իւր հրաժարականին մի օրինակն ևս խրկել Օսման փաշային և աղաչել որ միջնորդէ: Կայսեր մօտ, որպէս զի իւր հրաժարականը ընդունուի վաղընդիմութիւն: Ասիկա զատ Պատրիարքը հաղորդէ նաև Օսման փաշային այն ինչ ներքին, որոց կարգադրությունները միայն կրնայ կաթողիկոս մը բաղմը Պատրիարքական տիտղոս վրայ: Այս նախախնի ներքին Պատրիարքը պարզապէս կը ստորագրէ «Յարութիւն կաթողիկոս»:

Երբ ատուր ժողովը շատ տխուր եղած է, ամենուն սիրտը ցաւած թէ պէտք է որ Մեքիսեղէն կաթողիկոսն այսպիսի անխոհեմութիւն մը ընէ:—այս մեր բառն է, իսկ եկեղեցականը պարզապէս մատուցելու բառը արտասանած են:—Եթէ նոյն իսկ իրաւունք ալ ունենար Մեքիսեղէն կաթողիկոսն, պէտք էր որ այսպիսի դրաւոր զէնք մը յանձնէր ի ձեռս անոնց, ոչ առիթ մը կորուստն թշնամեալ վարուելու հայ ազգին դէմ:

Կրօնական ժողովը կարծիք կը յայտնէ թէ՛ պէտք է որ անմիջապէս Մեքիսեղէն կաթողիկոսն պաշտօնանկ լինի և յետոյ եկեղեցական համառումը մարդ ժողովը զուարթ և մինչև իսկ զատապարտել Մեքիսեղէն կաթողիկոսը: Սակայն կը նկատուի թէ՛ ոչ Պատրիարք կայ, ոչ Գաղաթական ժողով, հետեւեալ օրինաւոր կերպով այս ան-

րինություններն ընել կարելի չէ:

Պատրիարքը ցաւած սրտով կը խօսի, արցունքներն աչքերէն վաղելով, այնպէս որ բոլոր եկեղեցականը տարոււ մը կը զգան: «Եթէ Մեքիսեղէն կաթողիկոսն ունի անձին դէմ ատեղություն, թող ընէ ինչ ինչ որ կրնայ ընել, բայց ինչ կուզէ խեղճ ազգէն, հաւածեալ եկեղեցիէն, զոր այսպէս անխեղճարար կը նախատէ ու կը հաւածէ և կը զայս ըսելով Պատրիարքն ոտքի կենէ, դուրս կը բանայ,—նոյնը կընեն բոլոր եկեղեցականը,—և դողողուն ձայնով, արտասուակոյն աչքերով կըսէ՛ չառնու չորս և Որդոյ և Հորդոյն. անիծեալ լիցի Մեքիսեղէն կաթողիկոս: Կրօնական ժողովը անհամբեր կը ձայնակցին այս տխուր արարողութեան և վերադարձած սրտերին մի քիչ բուժած կը մեկնին:

Այս խոյրներն շատ տխուր տպաւորութիւն ըրին Պոլսոյ մէջ. Մեքիսեղէն կաթողիկոսի դէմ կը տիրէ անպիտի դալորութիւն մը, զոր նկարագրել կարելի չէ: Մինչև իսկ զրամական տեսակետով կը պարսաւեն այս ձեռնարկ: Ինչ հասոյթ որ պիտի բերէ այն զրամադրութիւնը, զոր պիտի գործածեն խառնություն չինութեան, աւելի հասոյթ կրնայ բերել եթէ ուրիշ բանի գործածուի. մասնաւորապէս հային հրատարակեցաւ «Առեւը» մէջ: Այս եղևուծիկներէն ամեն ոք կը հետեցնէ թէ համաձայնութիւն մը կայ իզմիրի առաջնորդարանի և Պոլսոյ «հայրենասուէր» ազգայնաց, փափաքեան և ընկ. միջև, որոյ չորսիւ մինչ մէկ կողմանէ Շահապաղեանն աստ կը պաշտպանուի, միւս կողմանէ Մեքիսեղէն կաթողիկոսն անոնց, փափաքեանց, ծրարներուն գործադիրն կը հանդիսանայ: Ամենքը պիտի աշխատեն միասին կատարելապէս հաճող լինել կառավարությունն, անոր ամեն անգամներն ընել տալ և փոխարէն, ապագային մէջ, կիլիկիոյ աթոռն ընդարձակել, ընդհանրական ընել և օր մը Մեքիսեղէն կաթողիկոսն հուշակել նորա զանալան, թերեւ Պոլսոյ պատրիարքութիւնն ալ միասին:

Եթէ երբեք Մեքիսեղէն կաթողիկոսն ունենար խելացի բարեկամ մը, պիտի յիշեցնէր անոր թէ ամենէն մեծ վտանգն է իրեն համար կորսնցնել ազգին համակրանքը:—Այսօր ազգին համար այն է Մեքիսեղէն կաթողիկոսն, ինչ որ էր մի երկու շաբաթ առաջ. տակաւին անդունդին յատակը չը հասած, թող ևս դառնայ. այս խորհուրդն է, որ իրեն կը տրուի:

Այս խոյրը մոռցնել կուտայ ուրիշ խոյրներ: Գանձաժողովը, որ պաշտօն ունէր ընդ նախագահութեամբ Արիֆի փաշայի, քննել հայոց Պատրիարքարանի և Գառնական նախարարութեան միջև տեղի ունեցած անհամաձայնությունը, արդէն իւր տեղեկագիրը մատուցած է առ Բ. Գուռն: Ընդհանրապէս կը կարծուի թէ՛ նպատուար է հայոց, իսկ «հայրենասուէրներն» ուրախութեամբ կը հուշակին թէ աննպատ է: Մինչև ցարդ ոչինչ ստոյգ է, թէպէտև հաւանական է նպատուար լուծում մը:

Երբ իսկ իզմիրի տեղական իշխանութեանց կարգադրութեամբ զարդար տուած են գերեզմանատանց փոխադրություններն:

Վանքէն եկած լուրեր կը հաղորդեն թէ Արսէն վ. Թոմասեան ձեռքաւարուելով ի Հիքքեարի, չղթայակապ վան տարուել է:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վանքի դուռն են արտասահմանի հայոց լրարգրներին նոյեմբերի 3/15-ից հետեւելով. «Արսէն վարդապետ Թոմասեան Շատախի կողմեր գնացած էր հին պատմություններ հաւաքելու համար: Իրեն նկատեալը զրպարտություններ կաննել վանի նահանգապետ փաշային, որ այն կողմեր գնացած էր պարտուել Շատ մը հարցաքննություններէ վերջ, նահանգապետ փաշան Արսէն վարդապետին վերջից այստեղ քաղաքը, ուր բանտարկած, այժմ խիստ հակողութեան տակ է, այնպէս որ մարդ չը կրնար տեսակցություն երթալ: Կը սպասեն փաշայի վերադարձին: Ունենք կասն թէ Աղթամարի խաչատուր կաթողիկոսի զրպարտություններն զոհ եղած է Արսէն վարդապետ»:

—Երբեք Բերլինում հրատարակվել է մի քիչ լուրեր, որի ռազմապետ-հեղինակը այն միտքն է յայտնում, որ իբրև թէ ներկայ պայմաններին մէջ Ռուսաստանը հինգ շաբաթվա ընթացքում հաղթականորէ իր զորքը պատրաստել պատերազմ ըն-

տելու համար: Բերլինում հրատարակած այդ լրարգրը զանազան խորհուրդներ է տալիս Առաքելային, թէ ինչ դիրք պէտք է բռնել պատերազմի դէպքում: Մինչ մի կողմից պատմություններ հաւատարմութիւն են, որ խաղաղութիւնը ապահով գրությունն մէջ է, միւս կողմից պատերազմի խնդիրը հասարակական հետաքրքրությունն նկատ է դարձել եւրոպական մայրաքաղաքներում:

—Գերմանական ազատամիտ մամուլը միանգամայն ընդդէմ է մաքսաւարների շատացնելուն և այդ առիթով կատաղի կերպով յարձակվում է թշնամագիր վրայ:

—Սօֆիայում հարկաւոր հրահանգները ստանալուց յետոյ՝ Վուկոպիչ նորից դարձաւ Կ. Պոլսոյ Սօֆիայում կարծում են, որ Վուկոպիչ այժմ աւելի միջոցներ ունի Թիւրքիան և Բաղդադի միմեանց մօտեցնելու:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզում հետաքրքրություն ապաստում են մի նոր զրքի հրատարակվելուն: Դա ֆրանսիական հանրապետությունն նախկին նախագահ Գրէվիի յիշատակարանն է, որի մէջ նա գրել է այն բոլորը, ինչ որ լսել, տեսնել և գործել էր իր նախագահական պաշտօնավարութեան ընթացքում: Այդ զրքը շուտով տպվելու է «Նախագահի յիշատակարան» վերնագրով:

Բէլգիայում կանանց համար գործունեություն մի նոր առարկէ ընդգրկեց: Բրիտանի փաստաբանները վճեցին թող տալ, որ կանայք ևս պարագլխի փաստաբանություններ:

Մի բժիշկ, Գրեվիի ազգանունով, ինչպէս հաղորդում են լրագրները, մի նշանաւոր գիւտ է արել. նա գտել է մի հասարակ, գործնական միջոց, որով կարելի է ծաղիկ հանելուց յետոյ՝ դէմքի չեղտությունից ազատվել: Այդ միջոցը կալցոմին է (զա մոգիկ է, որը լոյսի ազդեցությունն տակ սև գոյն է ստանում): Բժիշկ Գրեվիի առաջարկում է ծաղիկ հանածներին իրանց դէմքի վրա կալցոմին քսել, և ապա վերջից ցանել հասարակ պողպատի: Փորձից երևում է, որ այդ միջոցը պահպանում է ծաղիկ հանածներին դէմքը չեղտությունից:

Պրոֆէսոր Մախու, Պրագայում, նորեւում մ ձեռք արեց լուսանկարելու հրացանից արձա՞ գնտակի նկարը հանելու, և այդ փորձը արեց ինքն ինքն: Դա հաջողութեամբ տեղի ունեցան, որովհետև կալցոմինը նոյն իսկ այնպիսի հրացանաձգութեամբ հանել, երբ քնտակը մի վաղորդանում անցնում է 500 մէր ստորաձուլութեամբ:

Շուտով Օդէսայի նահանգական դատարանում ընկնելու է մի շատ արտասովոր գործ. տեղական բժիշկներից մէկը մեղադրվում է նրանում, որ ցանկացել է բռնաբարել մի կնոջ, որը եկել էր նրա մօտ խորհուրդ հարցնելու, իբրև բժիշկից:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՏԻՆ ԳՈՐԾԱՆԱԼՈՒԹԻՒՆՆԻՑ

ՎԻՆՆԱ, 7 դեկտեմբերի: Այսօր փամ մէկից մինչև երեքը՝ կայսրի նախադատութեամբ կայացաւ միջնադարի խորհրդի նիստը, մասնակցութեամբ կոմս Կաշուի, Բիւրնախի, Ռէյտի, կոմս Յապի, Տիսայի և ուրիշներ:

ԲԵՐԼԻՆ, 7 դեկտեմբերի: Դաշնակցական խորհուրդը հաւանություն տուեց հացահատիկների մաքսահարկի օրինադրին այն խմբագրութեամբ, որով ընդունված էր թշնամագիր:

ՎԻՆՆԱ, 8 դեկտեմբերի: Երէկ, կայսրի նախադատութեամբ կայացած միջնադարի խորհուրդում վճռված է ձեռք չառնել ոչ մի այնպիսի պատերազմական միջոց, որը պահանջում է պատգամաւորների ժողով դուրսբերել:

ԼՕՆՊՈՒՆ, 8 դեկտեմբերի: Պատկանողական ժողովը մէջ, Գրեվիում, մարիլի Սպարի մի ձառանց, որի մէջ իր զարմանքը յայտնեց այն մասին, որ թէ բոլորային, թէ լրագրներին և թէ հասարակություններ տիրում է երկուսը: Պետությունների յարաբերությունները լրագրները աւելի լարված են ներկայացնում, քան թէ իրականությունը ցոյց է տալիս. անմիջական վտանգ չէ նախատեսվում, բայց չէ կարելի ծածկել, որ անվերջապէս զինատարություններ դառնում է ինքն ըստ ինքեան վտանգի աղբիւր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբերի: Սենատը, քննելով Ստաւրոպոլի քաղաքային վարչութեան անգամ և զանազան լուրերով, քաղաքացիական Բոգաչովի, վարչութեան անդամների Բոչչիւնի և Չերնոմազովի վճռալին զանգար, որոնք Թիւրքիայի դատաստանական պալատը դատաւարտել է՝ երկուսովին փող վտանգելու համար՝ երկու տարի ուղղիչ դատաւարին մէջ մնալու, իսկ միւսներին խիստ կերպով յանդիմանելու,—հաստատեց պալատի վճիռը:

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Мористъ-Мелиновская ул. д. каз.